

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ՈՍԿԵՀԱՍԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱԿԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԿՆԱՐԿ**

Ոսկեհասկ համայնքը նախկինում ունեցել է Մոլլամուսա, Մուսական անվանումները: Ոսկեհասկ է վերանվանվել 1946թ-ին:

Համայնքը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, Շիրակի դաշտում` ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 450-500մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Գյուղը տուժել է 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր` կազմելով 1114հա: Պետական հողերում մեծ տեսակարար կշիռ ունեն արոտավայրերը` 152հա: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Նախկինում համեմատաբար մեծ մակերես են զբաղեցրել շաքարի ձակնդեղի ցանքերը, որոնք կրճատվել են երկրաշարժի արդյունքում Սպիտակի գործարանի փլուզման պատճառով: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Մինչև է 1967 թվականը գյուղը խմելու ջրից օգտվել է խորքային հորերից, իսկ 1967թ.-ից օգտվում է ինքնահոս Ղազանչի ջրագծից: Խմելու ջրով գյուղը ապահովված է 80-85 %-ով:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

**Աղյուսակ1. Համայնքի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները**

ԺՈՂՈՎՐԴՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	թ/թ	2016
	Բնակչության թիվը	2113
	Տղամարդ	1050
	Կին	1063

Կրթություն	Բարձրագույն	128
	Միջն. մասնագիտական	262
	Միջնակարգ	1302
	Ութամյա	183
	Տարրական	72
Տնտեսությունների թիվը		608
Ժամանակավոր բնակվողներ		273
Դպրոցական տարիքի 6-17 տարեկաններ		205
Ծնողազուրկ երեխաներ		18
Թոշակառուներ		276
Հաշմանդամներ		62

**1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

Ոսկեհասկ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 7 անդամներով: Ոսկեհասկ համայնքի աշխատակազմը բաղկացած է 8 աշխատակցից:

Համայնքապետարանի վարչական շենքը գտնվում է գյուղ Ոսկեհասկ 1 փողոց թիվ 57 հասցեում: Շենքի վիճակը վթարային է:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցներ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի թիվ 30 և 31 որոշմամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՍԿԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ  
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ**

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
Հայեցողական պաշտոններ							

1	Համայնքի ղեկավարի օգնական	1	176700	57	1	176700	176700
<b>Համայնքային ծառայության պաշտոններ</b>							
2	Աշխատակազմի քարտուղար	1	179800	58	1	179800	179800
3	Առաջատար մասնագետ	1	176700	57	1	176700	176700
4	Առաջին կարգի մասնագետ	1	148800	48	1	148800	148800
<b>Տեխնիկական սպասարկման անձնակազմ</b>							
5	Համակարգչային օպերատոր	1	89900	29	1	89900	89900
6	Գրադարանավար	1	86800	28	1	86800	86800
7	Գործավար	1	86800	28	1	86800	86800
8	Հավաքարար	1	74400	24	1	74400	74400
Ընդամենը		8	1019900	-	-	1019900	1019900

### 1.3 ՀՈՂՈՎՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում 1694,4 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1352,35 հա, բնակավայրերի հողերը՝ 191,48 հա, արտադրական նշանակության հողերը՝ 10,17 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 6,2 հա, հատուկ պահպանության հողերը՝ 6,72 հա, հատուկ նշանակության հողերը՝ 31.41 հա և ջրային հողերը՝ 68.17 հա:

### 1.4 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկայի մշակբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն

հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում:

Նշված խնդիրը լուծվելու է 2017 թվականի ընթացքում <<Հայկական կարիտասի>> և համյնքի բյուջեյի միջոցների հաշվին համաֆինանսավորմամբ:

Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների, կարտոֆիլի և այլ կուլտուրաների արտադրության համար:

Հացահատիկային կուլտուրաների և բանջարեղենի արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Ոսկեհասկ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտները: Սակայն այս ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

Համայնքում առկա գյուղ տեխնիկական գտնվում է անբարենպաստ վիճակում:

Համայնքաբնակները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ և բազմատեսակ պտուղներ:

### *ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ*

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սան մաքրումը: Համայնքը չունի կենտրոնացված աղբավայր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ավելացնել գյուղիկանաչապատտարածքները,
- բարեկարգել զբոսայգիները,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

### *1.5 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ*

Համայնքում Գյումրի քաղաքի հետ կապը ապահովված է միկրոավտոբուսների միջոցով: Համայնքում կան տեղադրված կանգառներ:

Ոսկեհասկ համայնքը հարևան համայնքների և Գյումրի քաղաքին կապող ճանապարհները գտնվում են վատ վիճակում: Ասֆալտապատ չեն:

#### *1.6 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտը զարգացած չէ:

Համայնքում գործում են սննդի խառը խանութներ, որոնք իրենց տեսականիով չեն բավարում բնակչությանը: Նաև առևտրի ոլորտի ոչ զարգացած լինելը պայմանավորված է Գյումրի քաղաքին մոտ լինելու հանգամանքով:

#### *1.7 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ*

Ոսկեհասկ համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 210 աշակերտ: Դպրոցը չունի մարզադահլիճ և սանհանգույց:

Տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի համաֆինանսավորմամբ համայնքում կառուցվել է մանկապարտեզ: Մանկապարտեզը դեռ գույքով ապահովված չէ:

2017 թվականին համայնքի բյուջեյի միջոցներով նախատեսվում է մանկապարտեզի գույքով կահավորում

#### *1.8 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*

Համայնքում չկա գործող համայնքային կենտրոն: Համայնքի բնակիչները հաճախում են Գյումրիում գործող մշակութային օձախներ, բայց բնակչության սոցիալական ոչ բարենպաստ պայմանների պատճառով ոչ բոլորին է հասելի :

#### *1.9 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒԱ, ՍՊՈՐՏ*

Համայնքում գործում է բուժկետ: Բուժկետում աշխատում են բուժքույրեր: Բժշկական ամբուլատորիան գտնվում է Ախուրի համայնքում (3 կիլոմետր է հեռու համայնքից):

Համայնքում կան ներուժ ունեցող մարզիկներ: Դպրոցի և համայնքապետարանի համագործակցությամբ կազմակերպվում են սպորտային խաղեր և մրցույթներ: Համայնքապետարանը դպրոցի երեխաների օժանդակում է սպորտային գույքով և ֆուտբոլի գնդակներով:

#### *1.10 ՀԱՆԳՍՏԻԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆՏԱՐԱԾՔՆԵՐ*

Համայնքի տարածքում է գտնվում Զորավար Անդրանիկի և Մեծ հայրենական հուշարձանը, հուշարձանի տարածքում վերջին տարիների կատարվել է ծառատուն

1.11 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող մեծ գործարաններ կամ արտադրամասեր, ուստի բնակչության աշխատանքի տեղավորվելու և աշխատելու հույսը մնում է միայն՝ համայնքապետարանում, ՀՈԱԿ-ներում, դպրոցներում:

Համայնքապետարանը ևս հնարավորությունների շրջանակներում օգնություն է ցուցբերում սոցիալապես անապահով ընտանիքներին:

**Աղյուսակ 14. Ոսկեհասկի համայնքի աշխատունակների և գործազուրկների, նպաստառու ընտանիքների, հաշմանդամների և ծնողազուրկ ու հաշմանդամ երեխաների վերաբերյալ ցուցանիշներն ըստ բնակավայրերի**

Հ/հ	Ցուցանիշները	Մոլորակային միջոցառում
1.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	
2.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	
3.	Հաշմանդամներ, այդ թվում՝	
4.	Մանկուց հաշմանդամներ	
5.	Աշխատունակներ	
6.	Զբաղվածներ	
7.	Գործազուրկներ	
8.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	

1.12 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծելու է իր պաշտոնական վեբկայքը՝ [www.voskehask.am](http://www.voskehask.am), որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում տեղադրված են



տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

### 1.13 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Ոսկեհասկ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Բնակավայրերում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կա թաքստոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

### ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, զբոսայգու կառուցման աշխատանքների ավարտին հասցման և բարեկարգման անհրաժեշտություն
- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ

- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների ցածր մակարդակ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
- ✓ Համայնքապետարանի շենքային անբավարար պայմաններ
- ✓ Նախադպրոցական դաստիարակության ոլորտում ծառայությունների մատուցման համար գույքի բացակայություն
- ✓ Ոսկեհասկի միջնակարգ դպրոցի սան հանգույցի և դահլիճի բացակայություն
- ✓ Խմելու ջրի ներհամայնքային ցանցի հիմնանորոգման անհրաժեշտություն
- ✓ Ոռոգման ջրի արտաքին և ներբնակավայրային ցանցերի հիմնանորոգման անհրաժեշտություն
- ✓ Ներբնակավայրային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
- ✓ Ներբնակավայրային փողոցների գիշերային լուսավորվածության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն
- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների (ժամանակակից տեխնոլոգիաներ) բարձրացման անհրաժեշտություն
- ✓ Գյուղամիջյան սելավատարի մաքրման անհրաժեշտություն
- ✓ Գերեզմանատան ցանկապատի հյուսիս արևելյան հատվածի հիմնանորոգում

## **ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

### **ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԵՂԿՈՂՄԵՐԸ**

- Համայնքի ուժեղ կողմերն են՝
- ✓ Համայնքի աշխարհագրական դիրքը ռազմավարական նշանակություն ունի. Թուրքիայի արևմտյան հատվածում սահմանակից է Թուրքիային (մոտ 4 կմ)
- ✓ Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները
- ✓ Ունի բերրի հողեր
- ✓ Աշխատուժի առկայություն

### **ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼԿՈՂՄԵՐԸ**

- Համայնքի թույլ կողմերն են՝
- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը
- ✓ Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

## ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի զարգացման հնարավորություններն են՝
- ✓ Անասնապահության զարգացումը
- ✓ Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- ✓ Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)
- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝
- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում)
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում

## ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ոսկեհասկի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 3 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Ոսկեհասկ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել գյուղատնտեսության և անասնապահության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Ձարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

*Ոսկեհասկի բնակչությանը անասնապահության և դաշտավարության ոլորտում առաջատար է եղել դեռ ԽՍՀՄ ժամանակներում, նշված ներուժը չփոշիացնելու համար անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել համայնքում առկա աշխատուժի համար*

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝

- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով գյուղատնտեսությունը, անասնապահությունը և գյուղ մթերքի արտադրությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարելավել համայնքապետարանի շենքային պայմանները
- ✓ Մանկապարտեզի գույքի ձեռք բերում
- ✓ Նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի ապահովում
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից
- ✓ Համայնքի տարածքով անցնող սելավատարի մաքրման աշխատանքների իրականացում
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Համայնքի բնակիչներին և զբոսաշրջիկներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով

- ✓ Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Ունենալ բարեկարգ զբոսայգիներ
- ✓ Ստեղծել համայնքում հանդիսություններ կազմակերպելու բավարար պայմաններ
- ✓ Ոռոգման ցանցի հիմնանորոգում որպեսզի արդյունավետ օգտագործվի ոռոգման ջրի պաշարները
- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հարթեցված դաշտամիջյան ճանապարհներ
- ✓ Նպաստել կենդանիների մթերատվության բարձրացմանը

### 3. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄՆ ԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ)

#### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ,

#### ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ոսկեհասկում գալիք 2017-2021թթ. Ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Շիրակի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչ ընթացքում է, օրինակ պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ:
- Պետական պատվերի շրջանակներում կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում:
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում, պատսպարանների և թաքստոցների կառուցում:

Պլանավորվող հինգ տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Շիրակի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ: Օրինակ, ակնկալվում է, Հայկական կարիտաս կազմակերպության հետ նախատեսվում է գյուղատնտեսության ոլորտում իրականացնել մի շարք ծրագրեր:

Համայնքը ունի նաև համագործակցության փորձ այլ կազմակերպությունների հետ:

**4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և հողի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին:

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

**Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը**

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստ.	2017թ. նախ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	<b>ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ</b>	43682.7	44800.8	44954.9	45800.0	47000.0	48150.0	49300.0

**5. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ԲԱԽ-երի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը ընդգրկելու համայնքի 2017-2027թթ. ՀԶՀԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն,

իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացումը ապահովելու համար:

**ԲԱԽ-երի կողմից առաջարկվող ծրագրերի ցանկ՝ ՀՀԾ-ում ընդգրկելու համար**

Հ/հ	Համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
		<i>ՏԻՄ-երի լիազորություններ</i>	
1	Ոսկեհասկի համայնքապետարան	Կառավարման ապարատի պահպանում	<b>126491,0 որից՝</b> 2017թ.՝ 22891,7 2018թ.՝ 24036,2 2019թ.՝ 25238,1 2020թ.՝ 26500,0 2021թ.՝ 27825,0
2	Ոսկեհասկի համայնքապետարան	Համայնքի հակակարկտային կայանների պահպանում և շահագործում	<b>3110,0 որից՝</b> 2017թ.՝ 500,0 2018թ.՝ 550,0 2019թ.՝ 610,0 2020թ.՝ 670,0 2021թ.՝ 780,0
3	Ոսկեհասկի համայնքապետարան	Ոսկեհասկի մանկապարտեզի պահպանում	<b>44206,0 որից՝</b> 2017թ.՝ 8000,0 2018թ.՝ 8400,0 2019թ.՝ 8820,0 2020թ.՝ 9261,0 2021թ.՝ 9725,0
4	Ոսկեհասկի համայնքապետարան	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	<b>13960,0 որից՝</b> 2017թ.՝ 2460,0 2018թ.՝ 2600,0 2019թ.՝ 2800,0 2020թ.՝ 3000,0 2021թ.՝ 3100,0
5	Ոսկեհասկի համայնքապետարան	Աղբահավաքման աշխատանքների իրականացում	<b>16576,9, որից՝</b> 2017թ.՝ 1900,0 2018թ.՝ 2100,0 2019թ.՝ 2300,0 2020թ.՝ 2500,0 2021թ.՝ 2500,0
6	Ոսկեհասկի համայնքապետարան	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	<b>24865,2, որից՝</b> 2017թ.՝ 11520,0 2018թ.՝ 11800,0 2019թ.՝ 12000,0 2020թ.՝ 12500,0 2021թ.՝ 12500,0

**ՀՀԾ-ում ընդգրկելու համար Ոսկեհասկի ԲԱԽ-ի կողմից առաջարկվող ծրագրերի ցանկ**

Հ/հ	Համայնքի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
		<i>ՏԻՄ-երի լիազորություններ</i>	
1	Ոսկեհասկ	Նորակառույց մանկապարտեզի գույքի և խոհանոցային տեխնիկայի ձեռքբերում	9000,0

2	Ոսկեհասկ	Համայնքային կենտրոնի կառուցում	450000,0
3	Ոսկեհասկ	Ֆուտբոլի դաշտի և հարակից խաղահրապարակի վերանորոգում	1.500.0
4	Ոսկեհասկ	Նստարանների տեղադրում	1750.0
5	Ոսկեհասկ	Մանկապարտեզի տարածքի բարեկարգում և կառուցապատում	5000.0
6	Ոսկեհասկ	Կանաչ գոտիների ստեղծում	2000.0
7	Ոսկեհասկ	Ոռոգման ջրի ցանցի հիմնանորոգում	18000,0
8	Ոսկեհասկ	Ոռոգման ջրի ցանցի ընթացիկ վերանորոգում	1200.0
9	Ոսկեհասկ	Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում /խճապատում/	2000.0
10	Ոսկեհասկ	Փողոցների գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում	3000,0
24	Ոսկեհասկ	Բնակավայրի բնակչության ներգրավում բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում	1000.0
	Ոսկեհասկ	Սելավատարի հունի մաքրում տիղմից	5000,0
	Ոսկեհասկ	Գյուղ տեխնիկայի ծեռք բերում	20000,0
	Ոսկեհասկ	<b>ՏԻՄ-երի լիազորություններից դուրս ծրագրեր</b>	
1	Ոսկեհասկ	Խմելու ջրի ցանցի հիմնորոգում և ջրավազանի կառուցում	100000,0
3	Ոսկեհասկ	Ոսկեհասկի միջնակարգ դպրոցի դահլիճի կառուցում համալրում	10000,0



**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՄՆԱԳԼԻՆԱՔԱՆԱԿԻ ՏԿՅԱԼՆԵՐՆԸ**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը մտքայնքում
1.	Խոշորեղջերավորանասունների գլխաքանակը, որից`	1260
2	Կովեր	650
	Խոզերի գլխաքանակը	85
5.	Ձիերի գլխաքանակը	2
6.	Հավերի և այլ թռչունների գլխաքանակը	4500
7.	Մեղվարնտանիքների քանակը	95

**ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ` ՀԱՄԱՅՆՔԱԲՆԱԿՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՔԱՆԱԿՆԵՐԸ**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Մարդատար ավտոմեքենաներ	225
2.	Բեռնատար ավտոմեքենաներ	35
3.	Կոմբայններ	2
4.	Վարի տրակտորներ, որից`	7
	Թրթուռավոր	4
	Անվավոր(Կիրովեցներ)	3
5.	Բելառուսներ	8

**Ծրագիր 01**  
**Մանկապարտեզի գույքով ապահովվում**  
 (Ծրագրի անվանումը)

**Կրթություն**  
 (Ոլորտի անվանումը)

**Ոսկեհասկի համայնքապետարան**  
 (Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 9000,0 հազար դրամ**

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝**

Վճարման կապարտեզի գույքի և խոհանոցային էլեկտրասարքավորումների գնում

**Ծրագրի հիմնավորումը**

Ոսկեհասկ համայնքում կառուցվել է մանկապարտեզ, որի սպասարկումը չի շահագործվում գույքի բացակայության պատճառով

**Ծրագրի նպատակները**

1. Համայնքաբնակ երեխաները հաճախում են Գյումրիում գտնվող նախակրթարաններ, որը ավելի ծախսատար է ծնողների համար: Ծրագրի իրականացման արդյունքում երեխաները կհաճախեն համայնքի մանկապարտեզ

**բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման**

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ)	9000,0					9000,0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆՔՅՈՒՋԵԻ ԾԱՆՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆՔՅՈՒՋԵԻ ԾԱՆՍԵՐ	9000,0					9000,0

**գ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					
		2017	2018	2019	2020	2021	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ), այդ թվում՝	9000,0					9000,0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱՆՍԵՐ						
Բ.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՇՈՎ ԾԱՆՍԵՐ, այդ թվում՝	9000,0					9000,0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում	9000,0					9000,0
	Այլ հիմնական միջոցներ	9000,0					9000,0

**Ծրագիր 02**  
**Գյուղ տեխնիկայի գնում**  
 (Ծրագրի անվանումը)

**Գյուղատնտեսություն**  
 (Ոլորտի անվանումը)

**Ոսկեհասկի համայնքապետարան**  
 (Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը`** 15000,0 հազար դրամ

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը`**

✓ Գյուղ տեխնիկա /տրակտոր և գյուղգործիքներ

**Ծրագրի հիմնավորումը**

Ոսկեհասկում առկա համայնքի բնակիչներին պատկանող տեխնիկան հնամաշ է և գյուղատնտեսական աշխատանքների կատարումը ծախսատար է

**Ծրագրի նպատակները**

1. Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի հողօգտագործողները և հողի սեփականատերերը կօգտվեն ավելի մատչելի սակագներից
2. Կնձակվեն համայնքում վերջին տարիներին չմշակվող վարելահողերը

**բ/ ծրագրի ծախսերն` ըստ ծախսերի գործառական դասակարգման**

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2017	2018	2019	2020	2021	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ)		15000.0				15000.0
Ա.	ՎԱՐՉԱՎԱՆՔՈՒՋԵԻԾԱՆՍԵՐ						
Բ.	ՖՈՆԴԱՅԻՆՔՈՒՋԵԻԾԱՆՍԵՐ		15000.0				15000.0

**գ/ ծրագրի ծախսերն` ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2017	2018	2019	2020	2021	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ), այդ թվում`		15000.0				15000.0
Ա.	ԸՆԹԱՑԻՎ ԾԱՆՍԵՐ						
Բ.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ, այդ թվում`		15000.0				15000.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում`		15000,0				15000,0
	Այլ հիմնական միջոցներ		15000.0				15000.0

**Ծրագիր 03**  
**Համայնքային կենտրոնի կառուցում**  
 (Ծրագրի անվանումը)

**Կրթություն և մշակույթ**  
 (Ոլորտի անվանումը)

**Ոսկեհասկի համայնքապետարան**  
 (Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

**Ծրագրի ընդհանուր արժեքը`** 250000,0 հազար դրամ

**Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը`**

✓ Համայնքային կենտրոնի կառուցում

**Ծրագրի հիմնավորումը**

Ոսկեհասկ համայնքում չկան մշակութային օջախներ, ինչը պատճառ է հանդիսանում համայնքի երիտասարդ ընտանիքների դեպի քաղաք շարժին /բնակության նպատակով/ Գյուղը կդառնա երիտասարդների համար ավելի ցանկալի բնակավայր

**Ծրագրի նպատակները**

1. Համայնքային կենտրոնում կգործեն մշակութային օջախներ
2. Ծրագրի իրականացման արդյունքում երտասարդ ընտանիքները չեն հեռանա գյուղից

**բ/ ծրագրի ծախսերն` ըստ ծախսերի գործառական դասակարգման**

Հ/հ	Ծրագրիծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2017	2018	2019	2020	2021	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ)		100000.0	100000.0	50000.0		250000.0
Ա.	ՎՈՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱՆՍԵՐ						
Բ.	ՖՈՆՏԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱՆՍԵՐ		100000.0	100000.0	50000.0		250000.0

**գ/ ծրագրի ծախսերն` ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

Հ/հ	Ծրագրիծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը					Ընդամենը
		2017	2018	2019	2020	2021	
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԵՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ), այդ թվում`		100000.0	100000.0	50000.0		250000.0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱՆՍԵՐ						
Բ.	ՈՉՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎԾ ԱՆՍԵՐ, այդ թվում`		100000.0	100000.0	50000.0		250000.0
1.1	Հիմնական միջոցներ, այդ թվում`		100000.0	100000.0	50000.0		250000.0
	Այլ հիմնական միջոցներ		100000.0	100000.0	50000.0		250000.0